ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Պայմանագրի համարը, ամսաթիվ	«ԲԷՑ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/22» «20» հոկտեմբեր 2018թ.
2. Պայմանագրի կողմը	«Դավիթ Էներջի» ՍՊԸ (անվանումը)
3. Պայմանագրի առարկան	220 կՎ «Սիփան» ՕԳ-ի թիվ 13-29 խարսխային հենարանների հատվածում ՕԳ-ի վերականգնման աշխատանքների կատարում
4. Պայմանագրի գումարը	38.796.000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն)
5. Պայմանագրի գործողության ժամկետը	«Սիփան» օդային գծի անջատման օրվանից 30 աշխատանքային օր
6. Գնումների կատարման ծածկագիրը	«ԲԷՑ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/22»
7. Հայտերի բացման ամսաթիվը	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄՆԵՐ

N	Պաշտոնը	Անուն Ազգանուն	Ստորագրություն
1.	Տեխնիկական տնօրեն	Լ. Ադամյան	
2.	Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ	Վ. Մարտիրոսյան	
3.	Մատակարարման բաժնի պետ	Ռ. Ալբերտյան	
4.	Իրավապայմանագրային բաժնի պետ	Կ. Մելքոնյան	
5.	Գլխավոր հաշվապահ	Գ. Մուրադյան	

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲԷՑ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/22

ք. Երևան «20» հոկտեմբեր 2018 թ.

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար Ա. Հովակիմյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դավիթ Էներջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Պ. Մխիթարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու) մյուս կողմից, կնքեցին Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կապալառուն ստանձնում է 220 կՎ «Սիփան» ՕԳ-ի թիվ 13-29 խարսխային հենարանների հատվածում ՕԳ-ի վերականգնման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կապալառուն էականորեն խախտել է պայմանագիրը: Կապալառուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կապալառուին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կապալառուն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կապալառուն պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և Աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված Աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով Աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող Աշխատանքային օրվանից հաշված 10 Աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված Աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված Աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված Աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող Աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կապալառուի կատարման ենթակա Աշխատանքի գինը կազմում է 38.796.000 (երեսունութ միլիոն յոթ հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամ, որից ԱԱՀ-ն կազմում է 6.466.000 ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության և հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ժամկետներում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուից գանձվել տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա

համար գանձել տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կապալառուին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում Աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված Աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի Աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի Աշխատանքների չափին,

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների Աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած

պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

7.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.8 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՊԱԼԱՌՈՒ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Դավիթ Էներջի» ՍՊԸ	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Այգեձոր 1 նրբ. 22շ., բն. 53	Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ	«Հայբիզնեսբանկ» Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1570016078840100	Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 00114704	ՀՎՀՀ 01522459
_____ Պ. Մխիթարյան	_____ Ա. Հովակիմյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1
« 20 » հոկտեմբեր 2018 թ. կնքված
ԲԷՑ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/22 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
220կՎ «Սիփան» ՕԳ-ի թիվ 13-29 խարսխային հենարանների հատվածում ՕԳ-ի վերանորոգման աշխատանքների

Չափաբաժնի հ/հ	Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Մակնիշը	Չափման միավոր	Քանակը	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7
		1. 220կՎ ՕԳ-ի ապամոնտաժում				
1	1	«Սիփան» 220 կՎ ՕԳ-ի վեց հատ հաղորդալարի մասնակի ապամոնտաժում մինչև 1կմ երկարության խարսխային թռիչքում զուգահեռ գործող ՕԳ-ին նորմալ պայմաններում	AC- 400/51	կմ (6 լար)	0,24	
	2	«Սիփան» 220 կՎ ՕԳ-ի վեց հատ հաղորդալարի մասնակի ապամոնտաժում մինչև 2կմ երկարության խարսխային թռիչքում զուգահեռ գործող ՕԳ-ին նորմալ պայմաններում	AC- 400/51	կմ (6 լար)	2,37	
	3	«Սիփան» 220 կՎ ՕԳ-ի վեց հատ հաղորդալարի մասնակի ապամոնտաժում մինչև 4կմ երկարության խարսխային թռիչքում զուգահեռ գործող ՕԳ-ին նորմալ պայմաններում	AC- 400/51	կմ (6 լար)	3,17	
	4	«Սիփան» 220 կՎ ՕԳ-ի վեց հատ հաղորդալարի մասնակի ապամոնտաժում երկու հատ 110 կՎ ՕԳ-ի անցումով խարսխային հենարանների միջև զուգահեռ գործող ՕԳ-ին նորմալ պայմաններում	AC- 400/51	անցում (6 լար)	1	
	5	«Սիփան» 220 կՎ ՕԳ-ի վեց հատ հաղորդալարի մասնակի ապամոնտաժում 35 կՎ ՕԳ-ի անցումով խարսխային հենարանների միջև զուգահեռ գործող ՕԳ-ին նորմալ պայմաններում	AC- 400/51	անցում (6 լար)	1	
	6	«Սիփան» 220 կՎ ՕԳ-ի վեց հատ հաղորդալարի մասնակի ապամոնտաժում 10 կՎ ՕԳ-ի անցումով կամ Ա ճանապարհով խարսխային հենարանների միջև զուգահեռ գործող ՕԳ-ին նորմալ պայմաններում	AC- 400/51	անցում (6 լար)	3	
	7	«Սիփան» 220 կՎ ՕԳ-ի վեց հատ հաղորդալարի մասնակի ապամոնտաժում 10 կՎ ՕԳ-ի անցումով կամ Ա ճանապարհով միջանկյալ հենարանների միջև զուգահեռ գործող ՕԳ-ին նորմալ պայմաններում	AC- 400/51	անցում (6 լար)	1	
		2. 220կվ ՕԳ-ի մոնտաժում				
	1	«Սիփան» 220 կՎ ՕԳ-ի վեց հատ հաղորդալարի մասնակի մոնտաժում մինչև 1 կմ երկարության խարսխային թռիչքում զուգահեռ գործող ՕԳ-ին նորմալ պայմաններում	AC-400/51	կմ (6 լար)	0,24	

2	«Սիփան» 220 կՎ ՕԳ-ի վեց հատ հաղորդալարի մասնակի մոնտաժում մինչև 2 կմ երկարության խարսխային թռիչքում զուգահեռ գործող ՕԳ-ին նորմալ պայմաններում	AC-400/51	կմ (6 լար)	2,37	
3	«Սիփան» 220 կՎ ՕԳ-ի վեց հատ հաղորդալարի մասնակի մոնտաժում մինչև 4կմ երկարության խարսխային թռիչքում զուգահեռ գործող ՕԳ-ին նորմալ պայմաններում	AC-400/51	կմ (6 լար)	3,17	
4	«Սիփան» 220 կՎ ՕԳ-ի վեց հատ հաղորդալարի մասնակի մոնտաժում երկու հատ 110 կՎ ՕԳ-ի անցումով խարսխային հենարանների միջև զուգահեռ գործող ՕԳ-ին նորմալ պայմաններում	AC-400/51	անցում (6 լար)	1	
5	«Սիփան» 220 կՎ ՕԳ-ի վեց հատ հաղորդալարի մասնակի մոնտաժում 35 կՎ ՕԳ-ի անցումով խարսխային հենարանների միջև զուգահեռ գործող ՕԳ-ին նորմալ պայմաններում	AC-400/51	անցում (6 լար)	1	
6	«Սիփան» 220 կՎ ՕԳ-ի վեց հատ հաղորդալարի մասնակի մոնտաժում 10 կՎ ՕԳ-ի անցումով կամ Ա ճանապարհով խարսխային հենարանների միջև զուգահեռ գործող ՕԳ-ին նորմալ պայմաններում	AC-400/51	անցում (6 լար)	3	
7	«Սիփան» 220 կՎ ՕԳ-ի վեց հատ հաղորդալարի մասնակի մոնտաժում 10 կՎ ՕԳ-ի անցումով կամ Ա ճանապարհով միջանկյալ հենարանների միջև զուգահեռ գործող ՕԳ-ին նորմալ պայմաններում	AC-400/51	անցում (6 լար)	1	
8	«Սիփան» 220 կՎ ՕԳ-ի AC - 400/51 տիպի հաղորդալարի վրա վերանորոգման սեղմակների տեղադրում և մամլում	PAC-400-3	հատ	96	
9	«Սիփան» 220 կՎ ՕԳ-ի AC - 400/51 տիպի հաղորդալարի վրա վերանորոգման սեղմակների տեղադրում և մամլում	PAC-400-4	հատ	6	
10	3տ քաշով խարսխի տեղադրում IV կարգի գրունտում զուգահեռ գործող ՕԳ-ին (շինարարական Աշխատանքներ)		հատ	3	
	3. Ավտոտրանսպորտ				
1	Մեկուսիչների և գծային արմատուրայի բեռնում, տեղափոխում ճանապարհով 40 կմ և բեռնաթափում		տն	3,5	
	Նյութեր շինարարության համար				
1	Հաղորդալար	AC-400/51	տն	81,88	
2	AC-400/51 հաղորդալարի տատանման մարիչ	ГВН-5-30	հատ	240	
3	AC-400/51 հաղորդալարի պահանգ	РГ-3-500	հատ	192	
4	AC-400/51 հաղորդալարի մերակների պահանգ	РУ-3-400	հատ	24	
5	Մեկուսիչների պահող շարան	1x15xПС120	հատ	8	
6	Մեկուսիչների պահող շարան	1x17xПС120	հատ	1	

7	Մեկուսիչների ձգող շարան	2x15xПС160	հատ	21	
8	Վերանորոգման սեղմակ	РАС-400-3	հատ	96	
9	Վերանորոգման սեղմակ	РАС-400-4	հատ	6	
4. Վերադարձվող նյութեր					
	Հաղորդալար	АС-400/51	տն	72,404	տեղում օգտագործվող
	АС-400/51 հաղորդալարի տատանման մարիչ	ГВН-5-30	հատ	230	տեղում օգտագործվող
	АС-400/51 հաղորդալարի պահանգ	РГ-3-500	հատ	150	տեղում օգտագործվող
	АС-400/51 հաղորդալարի մերակների պահանգ	РУ-3-400	հատ	24	տեղում օգտագործվող
	Մեկուսիչների պահող շարան	1x14xПС120	հատ	8	տեղում օգտագործվող
	Մեկուսիչների պահող շարան	1x17xПФ8,5	հատ	1	պահեստ
	Մեկուսիչների ձգող շարան	2x14xПС160	հատ	15	տեղում օգտագործվող
	Մեկուսիչների ձգող շարան	2x14xПФ8,5	հատ	6	պահեստ
Երաշխիքային ժամկետը		աշխատանքների երաշխիքային սպասարկման ժամկետը սահմանվում է աշխատանքները ավարտելուց հետո առնվազն մեկ տարի			
Աշխատանքների կատարման վայրը		Արմավիրի մարզ			
Աշխատանքների կատարման ժամկետը		«Սիփան» օդային գծի անջատման օրվանից 30 աշխատանքային օր			

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Դավիթ Էներջի» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Այգեձոր 1 նրբ. 22շ., բն. 53
«Ամերիաբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 1570016078840100
ՀՎՀՀ 00114704

Դ. Մխիթարյան
(ստորագրություն)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Ա. Հովակիմյան
(ստորագրություն)

Հավելված N 2
« 20 » հոկտեմբեր 2018 թ. կնքված
ԲԷՑ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/22 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Երկկողմանի ստորագրված հաշիվ-ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, հանձնման-ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Դավիթ Էներջի» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Այգեձոր 1 նրբ. 22շ., բն. 53
«Ամերիաբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 1570016078840100
ՀՎՀՀ 00114704

Պ. Մխիթարյան
(ստորագրություն)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Ա. Հովակիմյան
(ստորագրություն)

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ԲԷՑ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/22 ծածկագրով պայմանագրի

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Դավիթ Էներջի» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Այգեձոր 1 նրբ. 22շ., բն. 53
«Ամերիաբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 1570016078840100
ՀՎՀՀ 00114704

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Կապալառուն՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կապալառուն կատարել է հետևյալ Աշխատանքները՝

N	Կատարված Աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ԲԷՑ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/22 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անվանումը Կապալառուի անվանումը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված Աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն